


Հաստատված է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 4 նիստում
Գիտական խորհրդի նախագահ,

Ռ. Առաքելյան
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան



**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԳ**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողների գնահատման համակարգի արդյունավետության գնահատմանը և բարելավման կարգը մշակվել է Կրթության որակ և համապատասխանություն երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Փաստաթղթում տեղ գտած մոտեցումները ՀՊՄՀ աշխատանքային խմբի աշխատանքի արդյունք են, արտացոլում են եվրոպական բուհում ինդիվիդուալ ցուցաբերվող մոտեցումները և ՀՊՄՀ-ում կրթական գործընթացի համապատասխանեցումը եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին:

1. Ներածություն

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի որակի ապահովման և բարելավման գործընթացները միտված են նաև ուսանողների գնահատման համակարգի արդյունավետության գնահատմանը և բարելավմանը:

ՀՊՄՆ-ում ուսանողի գնահատման հիմնական նպատակներն են՝

- հավաստել, որ ուսանողը ձեռք է բերել որակավորման առնչվող գիտելիք, հմտություն և կարողություն,
- որոշարկել ուսանողի գիտելիքի կամ հմտությունների բացերը, ինչը հնարավորություն կտա նրան անցնել անհրաժեշտ լրացուցիչ ուսումնառություն:

Վերջինս իրականացվում է համալսարանի, կրթական ծրագրերի, առարկայական ծրագրերի շրջանակներում ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմներով և գործընթացներով: ՀՀ կառավարության կողմից 2011 թ. հունիսի 30-ի թիվ 959-ն որոշմամբ գործունեության է դրվել ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին կարգը, որով մասնավորապես նախատեսում է մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) շրջանակներում գնահատման համակարգի բարելավման մեխանիզմները:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՊՄՆ-ն սույն կարգով կներդնի ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի հստակ թափանցիկ գործընթացներ և մեխանիզմներ:

2. Կիրառման ոլորտ

Գնահատման համակարգի մշտադիտարկումը և վերանայումը գործընթաց է, որն ուղղված է ՄԿԾ շրջանակներում բավարարելու ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և արտաքին շահառուների պահանջները:

ՀՊՄՆ-ի ուսանողների գնահատման համակարգի արդյունավետության գնահատմանը եվ բարելավման կարգը սահմանում է համալսարանում գործող ուսանողների գնահատման համակարգի մշտադիտարկման, գործընթացների գնահատման և բարելավման ընթացակարգերը:

ՀՊՄՆ-ը գնահատման համակարգի վերանայման և բարելավման ընթացակարգի հիմնական **նպատակն է** աջակցել և գործարկել համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և ակնկալիքները ուսանողների գնահատման համակարգի չափանիշների, չափորոժիչների և մեխանիզմների վերաբերյալ:

Կարգը մշակված է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին ներկայացվող արդյունքահենության, ուսանողակենտրոն դասավանդման պահանջների բավարարման, որակի ապահովման խնդիրներին համապատասխան, ՀՀ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների, Բարձրագույն մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին, բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումներին համահունչ:

3. Գնահատման համակարգի վերանայման և բարելավման խնդիրները

- ապահովել ուսանողների գնահատման համակարգի շարունակական բարելավումը,
- ապահովել գնահատման համակարգի կապը ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման հետ,

- ապահովել ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգերի և փորձառությունների վավերությունը, անաչառությունը, իրատեսականությունը, ճկունությունը և հստակ սահմանված չափանիշների ընդգրկումը,
- ապահովել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի վերաբերյալ տեղեկացվածությունը և թափանցիկությունը,
- հետևողականորեն իրականանցել գնահատման լավագույն փորձի տարածում ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում,
- բարելավել ուսանողի ակտիվությունը, բարձրացնել ուսանողի կատարողական կարգապահությունը, ապահովել առարկայի ուսուցման հետադարձ կապը,
- բարելավել դասընթացների գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների ու կարողությունների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչներ և դրանց կարևորության աստիճանը,
- ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատում՝ ըստ մասնագիտության կրթական ծրագրի մասնագրի կոմպետենցիաների և ուսուցման վերջնարդյունքի ներկայացվող պահանջների:

Ուսանողների գնահատման համակարգի ոչ ֆորմալ մշտադիտարկումը իրականացվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրի իրականացնողի և դասընթացների համար պատասխանատու պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից: Ոչ ֆորմալ մշտադիտարկումը ենթադրում է գնահատման գործընթացների ընթացքում շահառուների կողմից արձագանքների գրանցում, վերլուծություն և փոխանցում համապատասխան լիազոր մարմիններին՝ որոշում կայացնելու նպատակով:

Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի ամենամյա գնահատումն ու վերանայումը իրականացվում է նախագնահատման, հետգնահատման և մնացորդային գիտելիքների ստուգման փուլերում: Գնահատման համակարգի վերանայման և բարելավման պաշտոնական գործընթացը իրականացվում է կրթական ծրագրերի պարբերական վերանայման հետ զուգահեռ՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

4. Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի գնահատման ու վերանայման փուլերը

Նախագնահատման փուլ.

Նախագնահատման փուլի գնահատումը նպատակ ունի ներդնել և իրագործել գնահատման հնարավորինս արդյունավետ և հստակ ձևեր և չափանիշներ, ինչպես նաև նախնական փուլում սահմանել ցուցիչներ, որոնցով կիրականացվի հետգնահատումը:

- Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին առարկայական ծրագրի գնահատման ձևերը և չափանիշները ենթակա են վերանայման և փոփոխության: Այդ նպատակով առարկան վարող դասախոսը, հիմք ընդունելով մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի վերջնարդյունքները, առարկայի նկարագրում բնութագրված կոմպետենցիոն դաշտը և ՀՊՄՀ ուսանողների գնահատման կանոնակարգը, ուսումնական տարվա սկզբից առնվազն երկու շաբաթ առաջ, ամբիոն է ներկայացնում առաջարկ առարկայի գնահատման գործոնների ու չափանիշների վերաբերյալ: Համաձայն առարկայական նկարագրի թեմատիկ տրոհումների գնահատման յուրաքանչյուր ձև պետք է ունենա իր գնահատման չափանիշները: Առարկայի ծրագրային բովանդակությունը և գնահատման ձևերը ներկայացնելիս դասախոսը հաշվի է առնում նաև նախորդ տարվա առարկայի

ծրագրային բովանդակության և գնահատման վերաբերյալ հետադարձ կապի միջոցով ստացված արձագանքները:

- Ամբիոնը, որպես ծրագրի մասնագիտական պատրաստումը իրականացնող պատասխանատու, ուսումնասիրում, գնահատում և համապատասխան ֆակուլտետի դեկանին է ներկայացնում ամփոփ տեղեկություն գնահատման ընտրված ձևերի և չափանիշների առարկայական ծրագրի ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանելիության վերաբերյալ:
- Գնահատման գործոնների և չափանիշների գնահատումն իրականացվում է Ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովի կողմից ֆակուլտետի անկախ դասախոսների ներգրավմամբ: Հանձնաժողովին, գնահատման ձևերի և չափանիշների հետ մեկտեղ տրամադրվում է նաև առարկայական ծրագրի նկարագիրը և ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները: Հանձնաժողովը, ուսումնասիրության արդյունքում, համապատասխան ամբիոնի վարիչին և դասախոսին ներկայացնում է իրադիտողությունները/առաջարկությունները առարկայական ծրագրի գնահատման ձևերի և չափանիշների վերաբերյալ:
- Գնահատման ձևերի և չափանիշների վերաբերյալ դիտողությունները/առաջարկությունները ընդգրկվում են առարկայական նկարագրի գնահատման չափանիշների հատվածում:
- Գնահատման ձևերի և չափանիշների թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով դասախոսը ուսումնական տարվա սկզբին, առաջին երկու շաբաթների ընթացքում, ներկայացնում է ուսանողներին առարկայական ծրագրի նկարագիրը և գնահատման ձևերը:

Հետգնահատման փուլ

Հետգնահատման փուլում գնահատումը նպատակ ունի ուսումնասիրելու և գնահատելու կիրառված գնահատման ձևերի և չափանիշների արդյունավետությունը, նպատակահարմարությունը՝ և համապատասխանելիությունը կրթական ծրագրի խնդիրներին:

- Յուրաքանչյուր առարկայական ծրագրի գնահատման գործոններն ու չափանիշները ենթակա են հետգնահատման: Այդ նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին համապատասխան ամբիոնի վարիչը կազմում է ժամանակացույց՝ ընտրված առարկայական ծրագրերի գնահատման գործոնների և չափանիշների հստակությունը, հուսալիությունը և ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանելիությունը գնահատելու նպատակով:
- Ամբիոնի վարիչը ֆակուլտետի դեկանին գրավոր ներկայացնում է ժամանակացույցը՝ հաստատման և գնահատման հանձնաժողովի ստեղծման նպատակով: Գնահատման հանձնաժողովում ընդգրկվում են համապատասխան ֆակուլտետի դասախոսներ և ուսանողներ: Յուրաքանչյուր առարկայական ծրագրի գնահատման ձևերի և չափանիշների հետգնահատման հանձնաժողովի անդամների քանակը չպետք է գերազանցի 7-ը:
- Հետգնահատումն իրականացվում է առարկայական ծրագրում ներգրավված ուսանողների հարցումների, դասախոսի իրավիճակային վերլուծության, առարկայական ծրագրի բովանդակության և համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:
- Ուսումնասիրության և գնահատման արդյունքում կազմվում և ֆակուլտետի դեկանին է ներկայացվում արձանագրություն՝ դիտողություններով և բարելավմանն ուղղված առաջարկություններով, որոնք հաշվի են առնվում հաջորդ ուսումնական տարում

առարկայական ծրագրի գնահատման ձևերի և չափանիշների ընտրության և ներկայացման նախագնահատման փուլում:

Մնացորդային գիտելիքների ստուգում

Մնացորդային գիտելիքի ստուգումը նպատակ ունի վեր հանելու ուսումնառության նախորդող շրջանում ուսումնասիրված առարկայի գիտելիքների այն հատվածը, որն հիմնարար է մասնագիտական հետագա գործունեության համար և մնայուն է մասնագետի հիշողության մեջ:

Մնացորդային գիտելիքի ստուգման անհրաժեշտությունից ելնելով կարելի է առանձնանցնել ուսուցման ընթացքում ստացվող գիտելիքների 4 մակարդակ.

1. երկար մտապահման ենթակա մնացորդային գիտելիք կամ ակտիվ հետագա մասնագիտական աշխատանքում և կյանքում,
2. մոռացվող, բայց մասնագիտական իրավիճակում վերականգնվող գիտելիքներ կամ պասիվ, որը կարելի է անվանել ակտիվ պաշարի ռեզերվ,
3. “օգնական գիտելիքներ”, որոնք մտապահվում են կարճ ժամանակահատվածով, բայց անհրաժեշտ են այլ նյութերի յուրացման համար:
4. միջառարկայական գիտելիքներ, որոնք կիրառվում են այլ տեսական առարկաների կամ գիտական նյութերի ընկալման համար

Մնացորդային գիտելիքները իրենց հիմքում ունեն 3 բաղադրիչ՝

ա/նյութի մտապահում,

բ/ նյութի գիտակցում,

գ/նյութի օգտագործում գործնական և հետազոտական գործունեության մեջ:

- Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման մասին որոշումը Ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովը ներկայացնում է ռեկտորին հաստատման: Ռեկտորի կողմից որոշումը կայացնելու նպատակով որակի ապահովման հանձնաժողովը ներկայացնում է նախապես մշակված գնահատման ա/ժամանակահատվածը, բ/առարկայացանկը, գ/ստուգման ձևը:
- Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումը անց է կացվում ակադեմիական խմբերում, հոսքերում և բաժիններում, առարկայի ուսուցմանը և ամփոփմանը հաջորդող ուսումնական յուրաքանչյուր կիսամյակում մեկ անգամ:
- Հարցերի քանակը և հարցաշարերը մշակվում են որակի հանձնաժողովի անդամների կողմից: Հարցերի բնույթը և պարունակությունը պետք է լինի այնպիսին, որ դրանց հնարավոր լինի պատասխանել մեկ ակադեմիական ժամի ընթացքում:
- Ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումն անցկացվում է յուրաքանչյուր առարկայից ուսանողական համակազմի 2/3-ի պարտադիր ներգրավմամբ, գրավոր ստուգողական աշխատանքի՝ տեստային տարբերակների օգտագործմամբ:
- Ֆակուլտետային որակի հանձնաժողովը հրավիրում է համապատասխան դասախոսների, որոնց և հանձնարարվում է անցկացնել ստուգումը:
- Ուսանողների մնացորդային գիտելիքների գրավոր աշխատանքների ստուգումը իրականացվում է ամբիոնների առաջնակարգ մասնագետների կողմից, որակի ապահովման հանձնաժողովի հրավիրմամբ:
- Վերջին երեք տարիների ընթացքում նույն առարկայից ցածր արդյունքների գրանցման դեպքում ստեղծվում է արտաքին փորձագետներից կազմված հանձնաժողով, տվյալ առարկայի արդյունքների օբյեկտիվ գնահատման, ցածր արդյունքների պատճառների բացահայտման, ինչպես նաև եզրակացությունների կայացման համար: Հանձնաժողովի

եզրակացությունը ներկայացվում է Կրթության զարգացման և որակի ապահովման վարչություն և քննարկվում ֆակուլտետային խորհրդում, ռեկտորատի նիստում, ըստ անհրաժեշտության նաև համալսարանի գիտական խորհրդի նիստում:

- Վերոնշյալ խորհրդակցությունների արդյունքում կազմվում է արձանագրություն դիտողություններով, թերացումների վերացման և համակարգի բարելավման առաջարկություններով, որոնք հաշվի են առնվում ուսանողների գնահատման համակարգի ֆորմալ գնահատման և վերանայման գործընթացի ընթացքում:

5. Ուսանողների գնահատման համակարգի պաշտոնական գնահատում և վերանայում

- Ուսանողների գնահատման համակարգի պաշտոնական վերանայումն իրականացվում է կրթական ծրագրերի պարբերական վերանայմանը զուգահեռ՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ: Այն իրականացվում է ֆակուլտետային հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմակերպական գործընթացները նկարագրված են ՀՊՄՀ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգում:
- Պաշտոնական վերանայման ընթացքում ուսումնասիրվում են նախորդ 5 տարիների ընթացքում արձանագրված բացթողումները, դրանց շտկմանն ուղղված միջոցառումները, ուսանողների գնահատականների դինամիկան, հարակից այլ փաստաթղթերը: Ուսումնասիրությունների արդյունքում ֆակուլտետային հանձնաժողովը պատրաստում է հաշվետվություն արդյունքների վերաբերյալ, կրթական ծրագրերին կից գնահատման համակարգի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունների նախագիծ և իրագործման միջոցառումների պլան:
- Ֆակուլտետային հանձնաժողովի նախագահը փոխանցում է վերոնշյալ փաստաթղթերը Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնաժողովին՝ որոշում կայացնելու նպատակով:
- Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնաժողովի կողմից որոշումը կայացնելուց հետո ֆակուլտետային հանձնաժողովի նախագահը կազմակերպում է ամփոփող խորհրդակցություն հետագա քայլերը քննարկելու և միջոցառումների ծրագիրը իրականացնելու համար:
- Ֆակուլտետային հանձնաժողովի հաջորդ հանդիպումը տեղի է ունենում մեկ տարի հետո՝ կատարված գործողությունների վերաբերյալ քննարկում կազմակերպելու նպատակով:
- Ֆակուլտետային հանձնաժողովի կազմը և պատասխանատվությունները սահմանված են ՀՊՄՀ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգում:
- Ուսանողների գնահատման համակարգի վերանայման հաշվետվությունը պետք է ներառի հարցերի շրջանակ(Հիմնական հարցերի օրինակել շրջանակը կցվում է)

Ուսանողների գնահատման համակարգի վերանայման հաշվետվությանը ներառվող հարցերի օրինակելի շրջանակ

- Արդյո՞ք գնահատողները և գնահատման հանձնաժողովի անդամները տեղեկացված են կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին և գնահատման համակարգին՝ գնահատումը պատշաճ կերպ իրականացնելու համար:
- Արդյո՞ք ուսանողները տեղեկացված են գնահատման համակարգից;
- Արդյո՞ք գնահատման համակարգը արտահայտում է ուսումնառության վերջնարդյունքները;
- Արդյո՞ք ուսանողների գնահատումն իրականացվում է մեկ մասնագետի, թե ընթերակայի մասնակցությամբ;
- Արդյո՞ք գնահատման համակարգի չափանիշները հստակ են և հրապարակված:
- Արդյո՞ք գնահատման համակարգում հստակ նկարագրված են ուսանողների բացակայության, հիվանդության կամ այլ մեղմացնող հանգամանքները;
- Արդյո՞ք հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները: